

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ

Արցախահայության ազատագրական շարժման արդեն ավելի քան մեկուկես տարվա հրապարակային արձագանքները հաճախ են մեզ կանգնեցնում զարմանալի, հաճախ զայրացուցիչ դրսևորումների դեմ-հանդիման: Այդօրինակ դրսևորումների մեջ մի առանձնահատուկ համառությամբ են հնչում ադրբեջանական կողմի այն պնդումները, թե, իբրը, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն այն գլխից մտել է Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ, և հակառակ բնույթի պաշտոնական վճիռ ո՛չ գոյություն է ունեցել, ո՛չ էլ կարող էր ունենալ: Այսպիսի պնդման հեղինակները, որ ադրբեջանցի վայ գիտնականներն են, երբեմն էլ պատմական իրողություններից անտեղյակ այլազգիներ, ամեն կերպ ջանում են իրենց ընթերցողներին կամ ունկնդիրներին համոզել, թե Արցախ-Ղարաբաղն ադրբեջանական հող է, դարեր շարունակ ադրբեջանական պետության կազմի մեջ մտած երկրամաս, և 1920—1921 թթ. էլ Անդրերկրկոմի որոշմամբ, միանգամից ու առանց որևէ բարդության, ճանաչվել ու թողնվել է նորաստեղծ Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ:

Հակապատմական, ըստ էության, իրենց մանրամասների մեջ՝ սուտ պնդումներ, որ ջնջվում են մասնագիտական նույնիսկ թռուցիկ հայացքի ներքո: Ի՛նչ արժե, օրինակ, «ադրբեջանական հող» բառերը, երբ ոչ մասնագետներին անգամ հայտնի է, որ պատմական աղբյուրներին շուրջ երեք հազար տարի հայտնի Արցախ-Ղարաբաղը ի սկզբանե հանդիսացել է հայ ժողովրդի բնօրրաններից մեկը, ունեցել է բացառապես հայկական, մեր Պատմահայր Մովսես Խորենացու հավաստմամբ, Հայկ նահապետի սերունդներից սկզբնավորված նախարարական-իշխանական տուն, որն էլ իր հերթին միշտ մտել է Հայոց միասնական թագավորության (Մեծ Հայքի, Բագրատունյաց) կազմի մեջ, իսկ հետագայում, ուշ-միջնադարյան դաժան պայմաններում, կառավարվել է նույն Հայկազուն նախարարական, իշխանակաց հարստության հարազատ բեկորները հանդիսացող մելիքական տոներով, ընդհուպ մինչև Ռուսաստանի տիրապետության հաստատումն Անդրկովկասում:

ԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ, ԵՐԲ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԳՐՎՈՒՄ ԷՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒ ՍՏՈՒՅԳ ՓԱՍՏԵՐԻ հիման վրա և ոչ թե այս կամ այն պատեհապատշաճ տրամադրությանը հագուրդ տալու համար: ԱՅՆ ՕՐԵՐԻ ՌՈՒՍ ՆՇԱՆԱՎՈՐ պատմաբաններից մեկը՝ Վ. Մ. ՍԻՍՈԵՎԸ, Ադրբեջանի պատմության ճշմարիտ գիրքն է ստեղծել՝ սկսելով այսպես. «ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸՆ ՍԿՍՎԵԼ Է ՄԻԱՅՆ 1920 Թ. ԱՊՐԻԼԻ 28-ԻՑ, ԻՍԿ ԱԴՐԲԵՋԱՆԻ, ՈՐՊԵՍ ԱՌՀԱՍԱՐԱԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ՝ 1918 Թ. ՀՈՒԼԻՍԻ 4-ԻՑ» (В. М. Сысоев, Краткий очерк истории Азербайджана, Баку, 1925, էջ I):

Ուրեմն, այսպես. Ադրբեջանն իբրև ինքնուրույն վարչական միավոր, հայտնի է դառնում լոկ 1918 թ. հուլիսի 4-ից, այնպես, որ նրանից առաջ, այն էլ «դարեր շարունակ», չէր կարող իր մեջ պարփակած լինել Արցախ-Ղարաբաղը:

1918 թ. հուլիսի 4-ից մինչև 1920-ի ապրիլի 28-ն էլ այս Ա.—դրբեջանի տարածքում իշխել են մուսավաթականները, որոնց տիրապետությանը երբեք չի ենթարկվել Արցախ-Ղարաբաղը, քանի որ այն կառավարվել է Հայոց ազգային խորհրդի կողմից և շուրջ երկու տարվա ընթացքում տասնմեկ անգամ գումարած իր աշխատավորական համագումարներում մուսավաթականների միացման կամ հպատակության հանձնելու առաջարկներին տվել է մեկ ու միակ պատասխանը՝ Ղարաբաղը հայկական մարզ է և պետք է լինի միայն Հայոց միասնական պետության կազմի մեջ, իր մայր ազգի հետ միասին:

1920 թ. մայիսի վերջին 11-րդ կարմիր բանակը, Ադրբեջանը խորհրդայնացնելով, մտել է Լեռնային Ղարաբաղ՝ խորհրդային կարգեր հաստատել նաև այստեղ: Այդ ժամանակ 11-րդ բանակի հետ Ղարաբաղ մտած հայ բոլշևիկ ղեկավարների առաջարկությամբ մարզի սահմաններից ԻՆՔՆԱԿԱՄ ՀԵՌԱՑԵԼ ԵՆ ԴՐՈՆ ՈՒ ՆԺԴԵՀԸ, ՈՐՈՆՔ ՆԱԽԸՆԹԱՑԻՆ, ՏԵՂԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽԸՆ ԱՆՑԱԾ, ՄԱՐԶԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆ ԷԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՄՈՒՍԱՎԱԹԻ ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ: Հայ բոլշևիկ ղեկավարները, անշուշտ, Ռուսաստանի գերագույն ղեկավարությունը ներկայացնող Ս. Մ. Կիրովի ու Գ. Կ. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ, Դրոյին ու Նժդեհին համոզել էին, որ Լեռնային Ղարաբաղն ինքպայման Հայաստանին կմիացվի, հենց որ այնտեղ և՛ս հաստատվեն խորհրդային կարգեր:

Եվ իսկապես, 1920 թ. նոյեմբերի 30-ին Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ,

Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովի ու Արտաքին գործոց նախարար Հուսեյնովի ստորագրությամբ Հայաստանի հեղկոմ է հղվել հեռագիր, որն, իմիջիայլոց, հաղորդում է հետևյալը. «Այսօրվանից Հայաստանի ու Ադրբեջանի միջև եղած սահմանային վեճերը համարվում են վերացված: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի սոցիալիստական հանրապետության անբաժանելի մասը»: Հաջորդ օրը, դեկտեմբերի 1-ին էլ նույն առիթով Բաքվի խորհուրդն է հանդիսավոր նիստ գումարել, ամենաբարձր մակարդակով հռչակել նույն դեկլարացիան, և այն ՈՂՋՈՒՆԵԼ ԵՆ 11-ՐԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՌԱԶՄԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՄԻԽԱՅԼՈՎԸ, ՌՍԴ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԿԱՄԵՆՍԿԻՆ ՈՒ ՕՐՋՈՆԻԿԻՁԵՆ:

Դեկլարացիան ինչպե՞ս է ընդունվել կենտրոնական կառավարության կողմից: Իհարկե, բանիմացությամբ ու խրախուսանքով, որ արտահայտված ենք գտնում Ռուսաստանի ազգությունների գործերի ժողկոմ Ստալինի անունից Հայաստան ուղարկված ողջույնի հեռագրի մեջ: Այնտեղ ասված է. «Դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ադրբեջանն ինքնակամ հրաժարվում է վիճելի նահանգներից, հռչակում Զանգեզուրի, Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի հանձնումը Խորհրդային Հայաստանին»:

ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՂԱՐԱԲԱՂՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՑՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՍՏԱԼԻՆԻ ԽԱՂԱՑԱԾ ԵՐԿԴԻՄԻ ԴԵՐԻՆ, ԱՊԱ ԴԱ ԵՎՍ ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՎ ՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ: Նշենք նաև, որ առաջներում այդ փաստաթղթերը բազմիցս հրատարակվել են, իսկ ղարաբաղյան շարժման օրերին վերահրատարակվել ու քննության են ենթարկվել ամենատարբեր մակարդակներով: Եվ եթե այսքանից հետո դեռևս կան մարդիկ, որոնք այդ ամենից անտեղյակ են, ապա գոյություն ունեցող փաստաթղթերը դրանից ո՛չ ցնդում են, ո՛չ էլ իրենց զորությունն են կորցնում:

1921 թ. հուլիսի 4-ին ՌՍԴ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենում էր հրավիրված՝ Լեռնային Ղարաբաղի բարդացած հարցը վերջնականապես լուծելու համար: Եվ այդ բյուրոն ձայների մեծամասնությամբ որոշեց Լեռնային Ղարաբաղը թողնել Խորհրդային Հայաստանի կազմում (հարցի այսպիսի լուծման օգտին քվեարկել են Գ. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Ալ. Մյասնիկյանը, Յու. Ֆիգատները, դեմ՝ Ն. Նարիմանովը և Ա. Նազարեթյանը):

Կովբյուրոյի այս որոշումն այնքան հիմնավոր ու էական է համարվել, որ մտցվել է ՌԽՖՍՀ Արտգործնախարարության տարեկան հաշվետվության մեջ՝ այսպիսի ձևակերպումով. «Հուլիսին Ադրբեջանի հետ կնքվում է համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի մասին, որը մտցվում է Խորհրդային Հայաստանի կազմի մեջ»:

Սակայն Ադրբեջանի ղեկավար Ն. Նարիմանովը, մոռացության տալով նախորդ տարվա դեկտեմբերին իր կառավարության հռչակած դեկլարացիան ու նրա հիման վրա ստեղծված այլևայլ փաստաթղթերը, Կովբյուրոյի հուլիսի 4-ի նիստի որոշումը բողոքարկում է այս խոսքերով.

«Նկատի առնելով այն կարևորությունը, որ ղարաբաղյան հարցը ունի Ադրբեջանի համար, անհրաժեշտ եմ համարում այն տեղափոխել ՌԿ(Բ)Կ Կենտկոմ՝ (այնտեղ) լուծելու»:

Կովբյուրոն այս հայտարարության հիման վրա ընդունում է նոր որոշում, որն ասում է. «Նկատի առնելով այն, որ Ղարաբաղի հարցը հարուցել է լուրջ տարաձայնություններ, ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովբյուրոն անհրաժեշտ է համարում վերջնական լուծման համար այն տեղափոխել ՌԿ(Բ)Կ Կենտկոմ»:

Ուրեմն, դուրս է գալիս, որ իր բնակչության ավելի քան 94 տոկոսը կազմող հայությամբ Լեռնային Ղարաբաղը Նարիմանովի կարծիքով ավելի մեծ կարևորություն է ունեցել Ադրբեջանի համար, քան թե Հայաստանի: Այսպիսին էր Ն. Նարիմանովի նոր հայտարարության էությունը: Եվ այդ հայտարարությունը վճռական գործոն է դառնում դեմոկրատական սկզբունքով (քվեարկությամբ) արդեն լուծված հարցը վերջնական վճռի համար փոխադրելու ՌԿ(Բ)Կ Կենտկոմ:

Նկատի առնենք, որ իր պնդումին ավելի մեծ կշիռ տալու համար, Նարիմանովը դիմել էր նաև մի այլ միջոցի. հայտարարել էր, թե Ղարաբաղը Հայաստանի կազմում թողնելու դեպքում «Ադրբեջանի ժողկոմխորհը իրենից դեն է նետում պատասխանատվությունը»:

Հիմա հաճախ են խոսում հարցերն ուժային դիրքից լուծելու մերժելիության մասին: Այս դեպքում երևի հարկ է հիշել, որ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՕԳՏԻՆ Է ԼՈՒԾՎԵԼ ՀԵՆՑ ՈՒԺԱՅԻՆ ԴԻՐՔԻՑ: Ուժային դիրքի՛ց և մանավանդ խարդավանքո՛վ, որովհետև, 1921 թ. հուլիսի 4-ի երեկոյան որոշած լինելով հարցի լուծումը թողնել Ռուսաստանի գերագույն ղեկավարությանը, հաջորդ իսկ օրը Կովբյուրոյի պլենումի նիստը շարունակվում է Ի. Ստալինի մասնակցությամբ և, վերստին մեջտեղ քաշելով Ղարաբաղի հարցը, առանց այն քննարկության դնելու, ԱՌԱՆՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՈՐԵՎԷ ՈՒՐԻՇ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԻ, ՈՐՈՇՈՒՄ Է ԵՐԿՐԱՄԱՍԸ ՏԱԼ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ՝ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ: Ահա այդ վճիռը. «Ելնելով հայերի ու մուսուլմանների միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապերից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբ. ԽՍՀ սահմաններում՝ տալով նրան մարզային լայն ինքնավարություն...»:

Այսպես է ԿԱՏԱՐՎԵԼ ՍՏԱԼԻՆԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆԸ, ԵՎ ՆՐԱ ՃՆՇՄԱՄԲ Է, որ մարզը մտցվել է Ադրբեջանի կազմում:

Այսքանից հետո մեջտեղ է գալիս բնական ու օրինական մի հարց. ադրբեջանցի ուսումնասիրողները և նրանց ձայնակցողներն ինչպե՞ս են հայտարարում, թե Լեռնային Ղարաբաղը միշտ էլ գտնվել է Ադրբեջանի կազմի մեջ կամ 1920—21 թթ. որևէ որոշմամբ այն չի միացվել Խորհրդային Հայաստանին: Այսօրինակ բաներ պատահում են երկու դեպքում. մեկ՝ երբ հեղինակը բացահայտորեն խեղաթյուրում է պատմական փաստերն ու իրողությունները, այսինքն՝ զբաղվում է կեղծարարությամբ, մեկ էլ՝ երբ անտեղյակ է լինում այդ իսկ փաստերից ու իրողություններից:

Բայց եթե առաջին դեպքը բարոյական սնանկության ապացույց է, ապա դրանից քիչ է տարբերվում նաև չիմացության ու անտեղյակության ցուցադրումը աշխարհով մեկ: